քրիստոնեայ հայը, յատկապէս իր կրօնի պատճառով:

Եւ՛ պետութիւնը, ե՛ւ կառավարական պաշտօնեաները, ե՛ւ մասնաւոր անհատները, ե՛ւ մանաւանդ մահմեդական հոգեւորականութիւնը ամէն միջոց գործ էին դնում հային դաւանափոխ դարձնելու: Հալածանքն ու հարստահարութիւնները ամենասովարական միջոցներն էին: Բայց պետական միջոցներից ամենազօրաւորը եւ միեւնոյն ժամանակ նաեւ ամէնից աղէտալին հայերի համար, այսպէս կոչուած Իմամ Ջաֆարի օրէնքն էր, որի զօրութեամբ ընտանիքի մահմեդականութիւն ընդունած մէկ անդամը դառնում էր միակ ժառանգը իր բոլոր հեռաւոր եւ մօտաւոր ազգականների եւ իրացնում էր նրանց բոլոր հարստութիւնը, անգամ նրանց զաւակներին, ծառաներին եւ աղախիններին: Դեռ աւելին. ո՛չ միայն ազգականը, այլ բոլորովին օտար մէկ մարդ, մահմեդականութիւն ընդունելով եւ մահմեդական սուտ վկաների ցուցմունքով, կարող էր տէր կանգնել այս կամ այն քրիստոնեայ ընտանիքի ամբողջ ունեցուածքին:

«Այս դարշելի օրէնքը — ասում է Սանսօն — կորցնում է ամէն օր հազարաւոր հոգիներ եւ ոչ ոք չի կարողանում փրկել նրանց»1):

Ցանկութիւնը եւ կրօնական մոլեռանդութիւնը հասնում էին այնտեղ, որ մինչեւ անգամ Ամենայն Հայոց Կաթողիկոսին էլ փորձում են բռնութեամբ մահմեդականութիւն ընդունել տալ:

Այսպէս, Սահակ կաթողիկոսը Տաճկաստանում մի խնդրով, փոխանակ մեծ վէզիրի միջոցով Սուլթանին դիմելու, դիմել էր անմիջապէս: Մեծ վէզիրը այդ բանի համար կատաղած՝ հրամայում է կաթողիկոսին ֆալախայ դնել եւ ծեծել այնքան, որ կամ հարուածների տակ մեռնի եւ կամ մահմեդականութիւն ընդունի:

Ի հարկէ հրամանն իսկոյն կատարւում է: Կաթողիկոսին դնում են ֆալախայի մէջ եւ երկու կողմերում կանգնած սպասաւորները սկսում են հաստ մահակներով անողորմ ծեծել: Շարունակ ծեծում են եւ միեւնոյն ժամանակ ասում. «Թո՛ղ քո հաւատը եւ մեր ճշմարիտ կրօնին դարձիր, որով եւ կազատուես տանջանքներից»: (Դաւ. Ի. եր. 246):

Հայ երեւելիները վախենալով, թէ մի գուցէ կաթողիկոսը, չկարողանալով դիմանալ ցաւերին, յանկարծ կրօնափոխ լինի, որը կը լինի անպատուութիւն իրենց համար եւ ամօթ ու նախատինք հայ ազգին, մեծ կաշառք տալով, յաջողեցնում են դժբախտ կաթողիկոսին մի կերպով ազատել մարդադաղանների ճիրաններից:

Հաւասիկ ընդհանուր գծերով այն քաղաքական ու միւս պայմանները, որոնց մէջ դարեր շարունակ տառապել է հայ ժողովուրդը երկու հարեւան մահմեդական պետութիւնների բռնակալ լծի տակ:

5.

Բնական է միանգամայն, որ նման պայմաններում մարդիկ դարձնէին իրենց հայեացքը ամենից առաջ դէպի Հայաստանի անկախութեան գաղափարը: Եթէ նրանք այսպէս տանջւում էին, տանջւում էին միայն նրա համար, որ իրենք օտարի հպատակ էին, օտար լծի տակ: Ուրեմն, եթէ իրենք կորցրած չլինէին իրենց անկախութիւնը, եթէ իրենք լինէին իրենց երկրի ու ճակատագրի տէրը, ուրիշ խօսքով՝ եթէ լինէին քաղաքականապէս ազատ եւ անկախ, պարսկի կամ տաճկի լուծը այլեւս չէր լինի իրենց վզին եւ ուրեմն իրենք այլեւս չէին տանջուի ու հարստահարուի:

Անդամ Դաւրիժեցու նման «քրիստոնեայ» վանականը հայ ժողովրդի այդ դժբախտութեան պատճառը համարում է Հայաստանի անկախութեան բարձումը, որը նա թագաւորութիւն է անուանում: «Հայոց ազգը — ասում է նա — դարձաւ օտար ազգերին եւ թագաւորներին ծառայ, դերի եւ ոտքի կոխան, որովհետեւ նա ինքը իր կամքովն ու իր մատներովը կուրացրեց իր աչքերը՝ իր նենդութեամբն ու անհնազանդութեամբը ինքն իր թագաւորութիւնը կործանելով» (Գլ. ԺԳ, եր. 147):

Ինչպէս տեսնում էք, Հայաստանի անկախութեան գաղափարը կեանքի ծնունդ էր, ծընուած հայ կեանքի իրական պայմաններից եւ ոչ թէ օդից բռնուած մի գաղափար էր նա,

1) Եղեան, «Պետրոս Մեծի յարաբերութիւնները XII, Դաւ. Ե. 68: